ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
(28.12.2022թ., մարզխորհրդի նիստ)

Հայաստանի Հանրապետությունն ամրագրել է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը. յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապրելու և դաստիարակվելու ընտանիքում, իսկ ընտանիքից դուրս խնամքը համարվում է <<ծայրահեղ միջոց>>, որովհետև հաստատության պայմաններում դժվար է կազմակերպել այնպիսի անհատական մոտեցում, ինչպիսին հնարավոր է ընտանեկան միջավայրում:

Սակայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով հաճախ երեխային ժամանակավորապես կարելի է բաժանել կենսաբանական ընտանիքից, եթե առկա պայմաններն ակնհայտորեն սպառնում են նրա կյանքին, ֆիզիկական և հոգեկան առողջությանը:

Այլընտրանքային խնամքը ներառում է կենսաբանական ընտանիքից դուրս կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի կազմակերպման բոլոր հնարավոր տեսակները, որը իրականացվում է խնամքի որևէ տեսակի միջոցով՝ երեխայի խնամքի տրամադրման նպատակով:

Երեխայի խնամքի տրամադրման նպատակով այլընտրանքային խնամքի որոշում ընդունելիս երեխայի կարծիքը հաշվի է առնվում երեխայի տարիքին և հասունության աստիճանին համապատասխան, այլընտրանքային խնամքի վերաբերյալ որոշման ընդունման գործընթացում սոցիալական աշխատողի, հոգեբանի, սոցիալական և հատուկ մանկավարժների, իրավաբանի և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնագետների ներգրավմամբ:

Կենսաբանական ընտանիքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում 0-3 տարեկան երեխաների խնամքի կազմակերպում ընտանեկան տիպի խնամքի որևէ տեսակում, իսկ անհնարինության դեպքում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում (մինչև 2026 թվականը գործելու են աջակցության 3 կենտրոններ՝ <<Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն>>, <<Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն>>, Երևանի <<Ջատիկ>> երեխայի աջակցության կենտրոն):

Միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով երեխային իր կենսաբանական ընտանիքից բաժանման դեպքում այլընտրանքային խնամքի տրամադրման տևողությունը չպետք է գերազանցի 6 ամիս ժամանակահատվածը, կենսաբանական ընտանիք վերադառնալու հնարավորության բացառման դեպքում խնամքը կազմակերպել հետևյալ առաջնահերթությամբ՝ որդեգրման հնարավորության դեպքում՝ որդեգրում, խնամակալի, հոգաբարձուի, խնամատարի ընտանիք, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն:

Երեխայի այլընտրանքային խնամքի տեսակներն են՝

1) որդեգրումը. /որդեգրման հետ կապված հարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշմամբ սահմանված կարգով/: Որդեգրումն այն իրավաբանական ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվողները ձեռք են բերում զավակների և ծնողների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումը թույլատրվում է ՝ միայն ու միայն ելնելով երեխայի շահերից:

Որդեգրումը իրավական և սոցիալական միջոցներով ծնող դառնալու գործընթաց է: Որդեգրողները հիմնականում երեխա չունեցող անձինք են, և որդեգրման նպատակը ծնող-երեխա մշտական, նոր և արդյունավետ փոխհարաբերությունների ստեղծումն ՝ ԱԾԽՄ երեխաների համար:

Ընթացակարգը սահմանում է, որ խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող, խնամատար ընտանիքում խնամվող երեխաներին որդեգրելու համար անհրաժեշտ է նաև խնամակալների կամ հոգաբարձուների, խնամատար ծնողների, իսկ 10 տարին լրացած երեխային որդեգրելու համար՝ նաև այդ երեխայի համաձայնությունը: Չի թույլատրվում եղբայրների և քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է երեխաների լավագույն շահերից:

Որդեգրումը կատարում է դատարանը երեխային որդեգրել ցանկացող անձի հատուկ դիմումով: Գործի քննության ընթացքին մասնակցում են խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը և որդեգրել ցանկացող անձը:

2) խնամակալությունը և հոգաբարձությունը. /խնամակալության և հոգաբարձության հարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ/:

3) խնամատարությունը (երեխայի խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքի որևէ տեսակի միջոցով՝

- ճգնաժամային
- արձակուրդային
- ընդհանուր
- մասնագիտացված:

Երեխային խնամատար ընտանիքում տեղավորելու հետ կապված հարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Խնամատարությունը որևէ պատճառով ծնողական խնամքից ժամանակավորապես կամ մշտապես զրկված երեխայի խնամքի կազմակերպումն է մեկ այլ ընտանիքում:

Խնամատար ընտանիքը ապահովում է ամենօրյա խնամք և բավարարում երեխայի զարգացման կարիքներն այնքան ժամանակ, քանի դեռ նա ապրում է տվյալ ընտանիքում:

Խնամատարության նպատակն է ժամանակավոր ընտանեկան խնամք և դաստիարակություն առաջարկել այն երեխաներին, ովքեր խնամվում են մանկական հաստատություններում և ում հարազատ ընտանիքում հնարավոր չէ կազմակերպել նրանց խնամքը՝ ծնողների հիվանդության, բացակայության և այլ պատճառներով:

4) երեխայի խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատությունում՝ նախապատվությունը տալով ընտանեկան տիպի հաստատություններին:

5) երեխայի խնամքը երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի ճգնաժամային բաղադրիչում:

6) 16-23 տարեկան անձանց խնամքը և մասնագիտական հմտությունների ձեռքբերման կազմակերպումը անկախ ապրելակերպ ուղեկցող ծառայությունում /UOU- մանկական գյուղեր՝ երիտասարդական ծրագրեր/:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այդ գործընթացում ներգրավված այլ մարմիններն ու կազմակերպությունները երեխայի այլընտրանքային խնամքի կազմակերպման հարցը քննարկելիս՝ առաջին հերթին ուսումնասիրում են երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում (երեխայի վերադարձը կենսաբանական ընտանիք) կազմակերպելու հնարավորությունը, իսկ դրա անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում դիտարկում են այլընտրանքային խնամքի կազմակերպման բոլոր հնարավոր տեսակները՝ նախապատվությունը տալով երեխայի խնամքի՝ ընտանեկանին մոտ տեսակներին:

Ամփոփելով ասեմ, որ երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան հորդորում է պետական լիազորված մարմիններին ընտանեկան խնամքից զրկված երեխաների տեղավորման և խնամքի տեսակների ընտրություն կատարելիս առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1. Ընտանիքների վրա հիմնված տարբերակներն ավելի նախընտրելի են, քան հաստատությունները:
2. Մշտական լուծումներն ավելի գերադասելի են, քան ժամանակավորները:
3. Ազգային լուծումներն ավելի գերադասելի են, քան դրսից ներմուծվածները:

Ընտանեկան խնամքից զրկված երեխաների համար խնամքի այլընտրանքային տարբերակները հետևյալներն են.

1. Ազգականների ընտանիք՝ խնամակալություն կամ հոգաբարձություն
2. Փոխարինող ընտանիք՝ որդեգրմամբ կամ խնամատարությամբ
3. Համապատասխան խնամքի հաստատություն:

ԸԿԵԻՊ բաժնի պետ՝ /Ա. Պետրոսյան/